

Երևանի պետական համալսարանի մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի ստեղծման դրամաշնորհային ծրագրի իրականացման ընթացքում մագիստրոսական կրթական ծրագրի և դասընթացների ու արդիական հետազոտությունների մշակման նպատակով անհատ խորհրդատուի ընտրության մրցույթի հայտարարություն

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման ընկերակցության համագործակցությամբ իրականացնում է <<Կրթության բարելավում>> վարկային ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում են Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացման աշխատանքները: ՆՄՀ-ն բարձրագույն կրթության ոլորտում նորարարությունները խթանող մեխանիզմ է, որի միջոցով մրցակցային հիմունքներով դրամաշնորհներ են տրամադրվում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացման և բուհերի կարողությունների հզորացման նպատակով: Այս դրամաշնորհով նախատեսվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում ստեղծել մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոն: Դրամաշնորհային ծրագրի իրականացման ընթացքում անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվության տրամադրման համար (մագիստրոսական կրթական ծրագրի և դասընթացների ու արդիական հետազոտությունների ծրագրերի մշակում) նախատեսվում է ներգրավել անհատ խորհրդատու: Անհատ խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջներն են.

- ✓ Կենսաբանության բնագավառում գիտական աստիճանի և գիտական կոչման առկայություն
- ✓ Գիտամանկավարժական գործունեության առնվազն 5 տարվա ստաժ
- ✓ Մանրէաբանության և կենսատեխնոլոգիաների մագիստրոսական մասնագիտական ծրագրերում դասավանդման փորձ
- ✓ Մանրէաբանության և կենսատեխնոլոգիաների մասնագիտություններով մագիստրոսների/ասպիրանտների թեզերի դեկավարման փորձառություն

Առավելություն կտրվի այն թեկնածուներին ովքեր ունեն.

- ✓ Արտասահմանյան համալսարաններում կամ գիտական կենտրոններում աշխատանքի փորձ
- ✓ Միջազգային մասնագիտական կազմակերպությունների անդամակցություն

Վերջին 5 տարիներին

- ✓ Ուսումնամեթոդական աշխատանքներ
- ✓ Գիտական հոդվածներ՝ հրատարակված միջազգային գրախոսվող հանդեսներում
- ✓ Միջազգային դրամաշնորհների ղեկավարի կամ մասնակցի փորձառություն
- ✓ Միջազգային գիտական միջոցառումներին մասնակցություն և զեկուցումներ

Անհատ խորհրդատուի աշխատանքը նախատեսվում է իրականացնել 2016 թ հունիս - 2017թ հունիս ամիսների ընթացքում (12 ամիս): Առաջին 6 ամսվա ընթացքում խորհրդատուն իրականացնելու է մագիստրոսական կրթական ծրագրի և նոր դասընթացների մշակում, իսկ 2-րդ վեցամսյակում խորհրդատուն իրականացնելու է արդիական հետազոտությունների ծրագրերի մշակում: Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի ՆՄՀ ղեկավար ձեռնարկի պայմաններին համապատասխան:

Հետաքրքրված անձիք պետք է ներկայացնեն դիմում, ինքնակենսագրություն (Curriculum Vitae), գիտական աստիճանի և գիտական կոչման առկայությունը հաստատող փաստաթղթեր, գիտամանկավարժական գործունեության առնվազն 5 տարվա ստաժի տեղեկանք, վերջին 5 տարիներին հրատարակված աշխատանքների ցուցակ:

Լրացուցիչ տեղեկատվության և հայտի ներկայացման համար անհրաժեշտ է դիմել մինչև մարտի 21-ը հետևյալ հասցեով.

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, 210 սենյակ

Հեռ: 060710009